

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
2016Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍԻՆ

ԹԻՎ 6

Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2016թ. հունվար-հունիսին

%

	2016թ.								հունվար- հունիսը 2015թ. հունվար- հունիսի նկատմամբ
	հունվարը	փետրվարը	մարտը	ապրիլը	մայիսը	հունիսը	հունիսը		
	նախորդ ամսվա նկատմամբ						2015թ. դեկտեմ- բերի նկատ- մամբ	2015թ. հունիսի նկատ- մամբ	
Սպառողական գների ինդեքսը	102.2	98.6	99.7	99.7	99.3	99.5	99.0	98.9	98.5
այդ թվում՝									
Սպառման ապրանքներ	103.0	97.9	99.6	99.6	99.2	99.3	98.5	97.4	96.6
Պարենային ապրանքներ	105.3	96.8	99.5	99.5	99.0	98.8	98.7	97.4	95.5
Ոգելից խմիչք, ծխախոտ	99.9	100.0	99.9	99.9	100.1	99.8	99.6	99.1	99.4
Ոչ պարենային ապրանքներ	99.5	99.4	99.8	99.7	99.4	100.1	97.9	97.2	98.5
Ծառայություններ	100.4	100.3	99.7	99.9	99.7	100.0	100.0	102.1	102.8


Սպառողական գներ: 2016թ. հունիսին մայիսի համեմատ ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է 0.5% գնանկում, ինչը հիմնականում պարենային ապրանքների 1.2% գնանկման արդյունք է: Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գները նշված ժամանակահատվածում նվազել են 1.1%-ով, ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 0.1% գնաճ, իսկ ծառայությունների ոլորտում սակագների ընդհանուր մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

2016թ. հունիսին 2015թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 99.0%, այդ թվում, պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 98.8%, ոչ պարենային ապրանքներինը՝ 97.9%, ծառայությունների սակագներինը՝ 100.0%:

2016թ. հունվար-հունիսին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.2%:

Սպառողական գների հավելաճը 2007-2016թթ. հունիսին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ,%



2016թ. հունիսին 2015թ. հունիսի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 98.9%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 97.5%, ոչ պարենային ապրանքներինը՝ 97.2%, ծառայությունների սակագներինը՝ 102.1%, իսկ հունվար-հունիսին 2015թ. հունվար-հունիսի համեմատ՝ համապատասխանաբար 98.5%, 95.9%, 98.5% և 102.8%:

Հանրապետության դիտարկվող 9 քաղաքներում 2016թ. հունիսին մայիսի համեմատ սպառողական գները նվազել են 1.2-0.1%-ով (գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Գյումրիում), մեկում գրանցվել է 0.1% գնաճ, մեկում էլ պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը: Մայրաքաղաքում սպառողական գները նվազել են 0.5%-ով:

Պարենային ապրանքների գներ: 2016թ. հունիսին մայիսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է պարենային ապրանքների 1.2% գնանկում, ինչի վրա իր անմիջական ազդեցությունն է թողել բանջարեղենի և կարտոֆիլի, ձվի, մսամթերքի՝ 18.3-1.2% գնանկումը: Դիտարկվող պարենային 13 ապրանքախմբերից 9-ում նշված ժամանակահատվածում գրանցվել է 18.3-0.2% գնանկում, 3-ում՝ 0.1-27.4% գնաճ, իսկ մեկում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում՝ 2016թ. հունիսին 2015թ. հունիսի համեմատ արձանագրվել է 21.4% գնաճ, իսկ 2016թ. մայիսի համեմատ՝ 18.3% գնանկում: 2016թ. հունիսին մայիսի համեմատ կանաչ պղպեղի գինը նվազել է 58.0%-ով, կանաչ լոբունը՝ 55.5%-ով, լոլիկինը՝ 50.2%-ով, սխտորինը՝ 21.9%-ով, խառը կանաչեղենինը՝ 16.4%-ով, կաղամբինը՝ 13.5%-ով, սմբուկինը՝ 11.1%-ով, կանաչ սոխինը՝ 11.0%-ով, ծաղկակաղամբինը՝ 8.1%-ով, սնկինը՝ 2.8%-ով, գլուխ սոխինը՝ 1.2%-ով: Միաժամանակ, հանրապետությունում գրանցվել է գազարի՝ 0.7%, կարտոֆիլի՝ 1.7%, ճակնդեղի՝ 35.7%, վարունգի՝ 36.1% գնաճ:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2016թ. հունիսին մայիսի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբի գները նվազել են 22.7-15.3%-ով, այդ թվում, գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Աշտարակում: Մայրաքաղաքում բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբի գները նվազել են 18.5%-ով:

Ձվի հանրապետական միջին գինը 2016թ. հունիսին 2015թ. հունիսի համեմատ նվազել է 21.5%-ով, իսկ 2016թ. մայիսի համեմատ՝ 10.9%-ով: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2016թ. հունիսին մայիսի համեմատ ձվի գինը նվազել է 16.4-4.8%-ով, ընդ որում, գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Գյումրիում: Մայրաքաղաքում գրանցվել է ձվի 8.4% գնանկում:

Մսամթերքի ապրանքախմբում 2016թ. հունիսին 2015թ. հունիսի համեմատ գրանցվել է 4.5%, իսկ 2016թ. մայիսի համեմատ՝ 1.2% գնանկում: 2016թ. հունիսին մայիսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է թռչնամսի՝ 6.3%, խոզի, ոչխարի և տավարի մսերի՝ համապատասխանաբար 3.6%, 3.4% և 0.3%, այլ մսեղենի (խաշի պարագաներ)՝ 3.4%, հավի բղի 1.1% գնանկում:

Հանրապետության դիտարկված 10 քաղաքներում 2016թ. հունիսին մայիսի համեմատ արձանագրվել է մսամթերքի 1.8-0.2% գնանկում, իսկ մեկում՝ 0.6% գնաճ: Մայրաքաղաքում մսամթերքի գների ընդհանուր մակարդակը նախորդ ամսվա համեմատ նվազել է 1.6%-ով:

Ձկնամթերքի ապրանքախմբում 2016թ. հունիսին 2015թ. հունիսի համեմատ գրանցվել է 2.9%, իսկ 2016թ. մայիսի համեմատ՝ 1.1% գնանկում: Վերջինս հիմնականում պայմանավորվել է «Իշխան» ձկնատեսակի 1.4% գնանկումով:

2016թ. հունիսին 2015թ. հունիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է կենդանական և բուսական յուղերի 2.7%, իսկ 2015թ. մայիսի համեմատ՝ 0.6% գնանկում: Վերջինս հիմնականում պայմանավորվել է այլ յուղերի (հալած յուղ)՝ 0.9%, կարագի՝ 0.8%, մարգարինի՝ 0.8%, արևածաղկի բուսական յուղի 0.6% գնանկումով:

Կաթնամթերքի ապրանքախմբում 2016թ. հունիսին 2015թ. հունիսի համեմատ գրանցվել է 3.8%, իսկ 2016թ. մայիսի համեմատ՝ 0.5% գնանկում: Վերջինս հիմնականում պայմանավորվել է «Զանախ», «Լոռի», և «Չեղեր» պանրատեսակների՝ համապատասխանաբար 1.5%, 0.8% և 0.7%, թարմ կաթի՝ 0.8%, մայրնեզի 0.6% գնանկումով:

Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում 2016թ. հունիսին մայիսի համեմատ կաթնամթերքի գները նվազել են 2.0-0.1%-ով, իսկ երկուսում գրանցվել է 0.1% գնաճ: Մայրաքաղաքում կաթնամթերքի գները նվազել են 0.1%-ով:

¹ 2016թ. մայիս-հունիսին 2015թ. մայիս և հունիս ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների և գների սոկոսային փոփոխությունների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:

2016թ. հունիսին մայիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է շաքարավազի՝ 0.4%, այլ մթերքի՝ 0.4%, հացամթերքի՝ 0.2%, ոգելից խմիչքի և ծխախոտի 0.2% գնանկում, իսկ սուրճի, թեյի, կակաոյի ապրանքախմբում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Մրգի ապրանքախմբում՝ 2016թ. հունիսին 2015թ. հունիսի համեմատ արձանագրվել է 12.7% գնանկում, իսկ 2016թ. մայիսի համեմատ՝ 27.4% գնաճ:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2016թ. հունիսին մայիսի համեմատ մրգի գներն աճել են 17.1-49.1%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Կապանում: Մայրաքաղաքում մրգի գներն աճել են 27.2%-ով:

2016թ. հունիսին մայիսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է հրուշակեղենի, ոչ ոգելից խմիչքի 0.1-1.1% գնաճ:

Ոչ պարենային ապրանքների գներ: 2016թ. հունիսին մայիսի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 0.1% գնաճ: Շինանյութերի գները նշված ժամանակահատվածում աճել են 0.1%-ով, գեղահարդարման ապրանքներինը՝ 0.1%-ով, դեղամիջոցներինը՝ 0.2%-ով, կահույքինը՝ 0.4%-ով, խոհանոցային սպասքինը՝ 0.5%-ով, գորգեղենինը՝ 0.6%-ով, այգեգործական ապրանքներինը՝ 0.7%-ով: Դրան զուգընթաց, հանրապետությունում արձանագրվել է վառելիքի՝ 1.7%, անձնապիտո ապրանքների՝ 1.4%, կոշկեղենի՝ 1.0%, տեքստիլեղենի՝ 0.7%, լվացող միջոցների՝ 0.3%, կենցաղային էլեկտրաապրանքների, մշակույթի և ոսկերչական ապրանքների՝ 0.2%, հագուստի և գործվածքի՝ 0.1%, գրենական պիտույքների 0.1% գնանկում:

2016թ. հունիսին մայիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի՝ 2.0% գնաճ և դիզելային վառելիքի 5.4% գնանկում: 2016թ. հունիսին 2015թ. հունիսի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գները նվազել են համապատասխանաբար 9.9% և 22.1%-ով, իսկ 2015թ. դեկտեմբերի համեմատ՝ 9.3% և 22.1%-ով:


Հանրապետության դիտարկված 6 քաղաքներում 2016թ. հունիսին մայիսի համեմատ արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.1-0.5% գնաճ, իսկ 5-ում՝ 0.4-0.1% գնանկում: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.2%-ով:

Ծառայությունների սակագներ: Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2016թ. հունիսին մայիսի համեմատ արձանագրված սակագների անփոփոխ ընդհանուր մակարդակի պայմաններում հանրապետությունում գրանցվել է բուժսպասարկման՝ 0.1%, կենցաղային բնույթի՝ 0.4%, մշակույթի ոլորտի՝ 1.1%, տրանսպորտի 2.0% հավելաճ (կապված օդային տրանսպորտով ուղևորների փոխադրավարձի 6.4% հավելաճի հետ): Միաժամանակ, հանգստի կազմակերպման ծառայությունների սակագները նվազել են 1.8%-ով, հանրային սննդինը՝ 1.6%-ով, բնակարանային-կոմունալ ծառայություններինը՝ 0.2%-ով, իսկ կապի, կրթության համակարգի, իրավական ու բանկային ծառայությունների սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

2016թ. հունիսին մայիսի համեմատ Գյումրի և Երևան քաղաքներում գրանցվել է ծառայությունների սակագների 0.3% և 0.1% նվազում: Հանրապետության դիտարկված մյուս 8 քաղաքներում ծառայությունների սակագներն աճել են 0.1-0.4%-ով, իսկ մեկում սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:


Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվել է 2016թ. հունիսի 1-ին, 10-ին, 20-ին և դրանց մոտակա օրերին Երևան քաղաքում և հանրապետության մարզերի 10 բնակավայրերում 470 անվանում ապրանք-ծառայությունների գծով:

ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2016թ. հունվար-հունիսին
նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



Արտարժույթի շուկա: 2016թ. հունիսին մայիսի համեմատ հանրապետության սպառողական և արտարժույթի շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 0.5% և 0.2% նվազում (ՀՀ դրամն արժևորվել է): 2016թ. հունիսին 2015թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների և հաշվարկային փոխարժեքի նվազումը կազմել է 1.0% և 1.1%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողական գների ընդհանուր մակարդակը մնացել է անփոփոխ, իսկ հաշվարկային փոխարժեքն աճել է 2.5%-ով: 2016թ. հունիսին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 477.5 դրամ, ինչը 0.5%-ով գերազանցել է 2015թ. հունիսի համապատասխան ցուցանիշը (475.1 դրամ):

ՀՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2015-2016թթ. հունվար-հունիսին
նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական միջին գները և գների ինդեքսները ՀՀ-ում և Երևան քաղաքում

	Չափի միավորը	Գների ինդեքսը ՀՀ-ում, %				այդ թվում՝					
		2016թ.				Քաղաք Երևան					
		մայիսը		հունիսը		Միջին գին (դրամ)				գների ինդեքս, %	
		2016թ. ապրիլի նկատմամբ	2015թ. մայիսի նկատմամբ	2016թ. մայիսի նկատմամբ	2015թ. հունիսի նկատմամբ	2015		2016		2016թ. մայիսը 2015թ. մայիսի նկատմամբ	2016թ. հունիսը 2015թ. հունիսի նկատմամբ
					Մայիս	Հունիս	Մայիս	Հունիս			
Մրգ. բնոցաններ		103.4	77.7	127.4	87.3	x	x	x	x	78.9	87.3
այդ թվում՝											
Խնձոր	կգ	110.5	69.1	111.0	78.3	887	802	596	688	67.2	85.7
Ելակ	“_“	111.5	83.6	79.3	114.0	1597	972	1236	1085	77.4	111.6
Արևադարձային պտուղ (նարինջ)	“_“	98.3	73.8	104.7	66.3	817	987	597	633	73.1	64.1
Կիտրոն	“_“	106.3	122.9	105.3	112.4	198	237	266	284	134.6	119.7
Ադամաթուզ (բանան)	“_“	100.3	91.3	97.7	97.5	980	893	891	867	90.9	97.1
Չորացրած մրգեր	“_“	99.1	92.1	88.9	81.5	6265	6359	6189	5102	98.8	80.2
Չամիչ	“_“	100.4	101.0	101.1	99.0	1727	1822	1751	1781	101.4	97.7
Ընկույզի միջուկ	“_“	104.5	65.8	105.7	67.8	8134	8655	6101	6550	75.0	75.7
Բանջարեղեն և կարտոֆիլ, բնոցաններ		92.9	102.7	81.7	121.4	x	x	x	x	100.0	119.7
այդ թվում՝											
Կաղամբ	կգ	95.7	51.8	86.5	100.9	205	88	108	91	52.6	104.0
Լոլիկ	“_“	80.6	93.7	49.8	128.6	1032	388	993	507	96.3	130.8
Վարունգ	“_“	45.5	80.0	136.1	144.4	403	332	317	442	78.5	133.1
Գլուխ սոխ	“_“	113.9	76.8	98.8	93.0	360	279	274	266	76.2	95.5
Գազար	“_“	107.0	75.8	100.7	76.7	597	571	444	454	74.4	79.6
Սեղանի ճակնդեղ	“_“	119.9	124.9	135.7	145.4	222	272	303	418	136.5	153.3
Մխտոր	“_“	103.5	121.2	78.1	117.9	1815	1444	2127	1705	117.2	118.1
Կանաչ սոխ	“_“	79.4	83.3	89.0	106.3	1099	635	791	701	71.9	110.4
Սմբուկ	“_“	130.5	147.1	88.9	146.4	1076	888	1132	1005	105.2	113.3
Կանաչ պղպեղ	“_“	81.2	114.3	42.0	120.6	1712	637	1743	729	101.8	114.4
Խտոր կանաչի	“_“	58.8	76.4	83.6	74.8	1111	931	775	636	69.8	68.4
Կարտոֆիլ	“_“	122.5	157.0	101.7	149.9	160	163	249	252	155.1	154.3

Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում¹

%

	2015 թ. դեկտեմբերը 2014թ. դեկտեմբերի նկատմամբ	2016թ.					մայիսը 2015թ. դեկտեմբերի նկատմամբ
		հունվարը	փետրվարը	մարտը	ապրիլը	մայիսը	
		նախորդ ամսվա նկատմամբ					
Ավստրիա	101.1	98.9	99.9	101.1	100.1	100.1	100.1
Բելգիա	101.4	98.3	101.7	100.8	100.2	100.4	101.3
Բուլղարիա	99.1	99.8	99.5	99.4	99.8	100.0	98.5
Հունգարիա	101.0	99.9	99.9	100.2	100.8	100.3	101.0
Գերմանիա	100.2	99.0	100.4	100.8	99.5	100.4	100.1
Հունաստան	100.4	98.3	100.0	101.1	100.7	100.0	100.1
Դանիա	100.3	99.5	100.5	100.1	100.2	100.2	100.5
Իռլանդիա	100.2	99.1	100.4	100.3	100.3	100.5	100.6
Իսպանիա	99.9	97.5	99.6	102.0	100.5	100.5	100.1
Իտալիա	100.1	97.8	99.6	102.1	100.2	100.3	100.0
Կիպրոս	99.4	98.6	99.4	100.7	100.4	101.3	100.4
Լատվիա	100.4	99.3	100.1	100.8	100.4	100.7	101.4
Լիտվա	99.7	99.6	99.7	101.1	100.7	100.0	101.2
Լյուքսեմբուրգ	100.9	98.5	101.3	100.1	100.2	100.5	100.5
Մալթա	101.2	98.4	100.6	101.0	102.6	101.1	103.7
Նիդերլանդներ	100.5	98.5	100.9	101.5	100.1	100.2	101.2
Լեհաստան	99.5	99.8	100.0	100.1	100.3	100.2	100.4
Պորտուգալիա	100.3	98.9	99.5	102.2	100.4	100.4	101.5
Ռումինիա	99.3	99.4	99.7	100.2	100.0	100.3	99.6
Սլովակիա	99.5	99.7	100.1	100.0	100.4	99.9	100.2
Սլովենիա	99.4	98.7	100.0	100.8	100.3	100.8	100.7
Միացյալ Թագավորություն	100.2	99.2	100.2	100.4	100.1	100.2	100.1
Ֆինլանդիա	99.7	99.5	100.2	100.5	100.3	99.9	100.4
Ֆրանսիա	100.3	98.9	100.3	100.8	100.1	100.5	100.6
Խորվաթիա	99.7	99.6	99.7	100.5	100.4	100.3	100.5
Չեխիայի Հանրապետություն	99.9	100.6	100.1	100.0	100.6	99.8	101.1
Շվեդիա	100.7	99.4	100.3	100.5	100.0	100.2	100.5
Էստոնիա	99.8	99.8	100.8	100.8	100.1	100.4	101.9
Հնդամներ Եվրամիության երկրներ (ԵՄ -28)2	100.2	98.8	100.1	100.9	100.1	100.3	100.3
Հայաստան	99.9	102.2	98.6	99.7	99.7	99.3	99.4
Ռուսաստան	112.9	101.0	100.6	100.5	100.4	100.4	102.9
Բելառուս	112.0	101.9	102.9	100.8	100.7	100.5	107.0
Ուկրաինա	143.3	100.9	99.6	101.0	103.5	100.1	105.2
Ղազախստան	113.6	101.3	101.1	100.5	100.6	100.5	104.2
Ղրղզստան	103.4	100.0	99.8	99.0	99.3	100.2	98.2
Մոլդովա	113.6	100.7	99.5	100.0	100.0	100.2	100.3
Տաջիկստան	105.0	101.4	100.5	100.2	100.4	100.2	...
Վրաստան	104.9	100.9	100.1	99.7	99.4	99.6	...
Կանադա	101.6	100.2	100.2	100.6	100.3	100.4	101.8
Նորվեգիա	102.4	100.5	100.6	100.6	100.3	100.4	102.4
Բրազիլիա	110.7	101.3	100.9	100.4	100.6	100.8	104.1
Կորեայի Հանրապետություն	101.3	100.0	100.5	99.7	100.1	100.0	100.4
ԱՄՆ	100.7	100.2	100.1	100.4	100.5	100.4	101.6
Թուրքիա	108.8	102.0	100.0	100.0	100.6	100.5	103.1
Շվեյցարիա	98.6	99.3	100.2	100.4	100.2	100.1	100.2

... - Տվյալները բացակայում են:

1- Տեղեկատվությունը պատրաստվել է Եվրոստատի, ազգային վիճակագրական ծառայությունների կայք էջերում, ինչպես նաև ԱՄՆ-ի Տվյալների տարածման հատուկ ստանդարտների պահանջներին համապատասխան ԱՄՆ-ի կայք էջում գետեղված ցուցանիշների հիման վրա:

2- Եվրամիության երկրների համար ներկայացված է միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

«Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2016թ. հունվար-հուլիսին» մամուլի հաղորդագրության հրապարակման ժամկետը, համաձայն «2016 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի», նախատեսված է 2016թ. օգոստոս ամսվա 5-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-301, Հավելված 3, էջ 67):